

ըը՝ համեմուած պատմութեան գործօնով, դառնալով պատմական ճշմարտութիւն, պատմական արդարութիւն ու պատմական յիշողութիւն, չնայած բազմաթիւ փորձութիւններին, եղել են եւ շարունակուած են մնալ հայկական ազգային ինքնութեան կարեւորագոյն բաղադրիչները:

1988 թ. հոկտեմբերի կէսերին, երբ դրամատիկ իրադարձութիւններ էին տեղի ունենում Ղարաբաղում, Հայաստանի ու Ղարաբաղի հոգեւոր միասնութեան ցուցադրմանն էր ուղղուած հետեւեալ ակցիան. արդէն մի քանի օր դասադուլ անող Կոնսերվատորիայի ուսանողները մոմերով ստեղծել էին Հայկական ԽՍՀ ու ԼՂԻՄ ուրուաքարտէզները, մոմերով իսկ գրել «Արցախ» եւ ապա՝ ուշ երեկոյեան, վառել էին մոմերը (նկ. 7): Այդ կերպ ստեղծուած պատկերն, ասես, համատեղ Հայ-ղարաբաղեան աղօթասացութիւն լինէր առ Բարձրեալը՝ վերամիաւորման գործում օգնութեան խնդրանքով:

Մէկ ուրիշ նպատակով ասուած խօսքից մէջբերում անելով լրիւ ուրիշ միտք շեշտելու մօտեցումն էր օգտագործուած Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի քարտէզների ուրուաքարտէզով եւ «Յաւերժ միասին: Մեր գործն արդար է» գրութեամբ 1988 թ. նոյեմբերեան մի պլակատում (նկ. 8): Չնայած այդ տեքստի հեղինակը նշուած չէ, սակայն դրա «հեղինակին» դժուար չէ որոշել: «Մէջբերման» առաջին մասը «վերելից» որպէս օրէնք իջեցուած տխրահռչակ այն կաղապարի տարբերակներէն է, որով յատկապէս սիրում էին փաստել տարբեր ժողովուրդների, ինչպէս օրինակ, ռուսների եւ ուկրաինացիների (դեռեւս Բոգդան Խմելնիցկու ժամանակներից) կամ ռուսների եւ բուլղարների, վերջապէս ԽՍՀՄ բոլոր ժողովուրդների բարեկամութեան անխախտելիութիւնը. ժողովուրդներ, որոնց, ինչպէս ԽՍՀՄ օրհներգում էր ասուում, «навеки сплотивла великая Русь»

(«յաւիտեան համախմբել է մեծ Ռուսիան»): «Մէջբերման» երկրորդ մասը («Наше дело правое. Мы победили») «Մեր գործն արդար է: Մենք կը յաղթենք») եւս մեզ լաւ ծանօթ է ԽՍՀՄ պատմութիւնից. դա Ֆաշիստական Գերմանիայի յարձակման առիթով ԽՍՀՄ կառավարութեան նախագահի առաջին տեղակալ, արտաքին գործերի ժողկոմ Վ. Մոլոտովի՝ խորհրդային ժողովրդին ուղղուած յայտնի դիմումի աւարտական խօսքերն են, որոնք հետագայում կրկնեց Ի. Ստալինը: Դեռեւս իր ժամանակին դրանք միանգամից դարձել էին թեւաւոր եւ գործածուած էին քարոզչութեան տարբեր մակարդակներում՝ ընդհուպ մինչեւ Հայրենական մեծ պատերազմում տարած յաղթանակի մեղալնների վրա դրոշմելը՝ «Наше дело правое. Мы победили» («Մեր գործն արդար է: Մենք յաղթեցինք»): Այդպիսով, Ղարաբաղը Հայաստանին վերամիաւորուելուն ուղղուած պայքարը հաւասարեցուած էր Ֆաշիստական գաւթիչների դէմ մղուող արդարացի պատերազմին, իսկ վերոնշեալ արտայայտութեան վերջին մասը՝ «Мы победили» («մենք կը յաղթենք»), կարգացում է պլակատի «տողերի արանքում»: Հետաքրքիր է, որ, իբրեւ զարաբաղեան հարցի արդարացի լուծման օժանդակութիւն, բերում են շտամպ-բառերը հէնց այն մարդու, որը ճակատագրական դեր էր խաղացել Լեռնային Ղարաբաղի հարցում:

Բնութագրական է, որ այս բառակապակցութիւնը չի կորցրել իր այժմէակաւնութիւնը նաեւ մեր օրերում, սակայն դրա հայերէն թարգմանութիւնն օգտագործուած է բացառապէս այլ առիթով. հայերէնում «արդար» նշանակում է նաեւ «անխաղախ, անարատ»¹⁴, ու այդ իմաստով կիրառական է «արդար իւր» արտայայտութիւնը: Եւ «Մեր գործն արդար է» ձե-

14 Տե՛ս Ստ. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, Եր., 1944, հտ. 1, էջ 257:

ւակերպումը արդէն քանի տարի է օգտագործում է «Արզնիկաթ» կաթնամերամշակման գործարանն իր արտադրանքի գովազդման համար, գրում պիտակների, իր ապրանքը տեղափոխող մեքենաների վրայ:

Քանի որ, ըստ «Ղարաբաղը՝ Հայաստանի մաս» ցուցապատառային խմբի պլակատների տրամաբանութեան, Ղարաբաղը եւ Հայաստանը դիտուում են իբրեւ բնական ամբողջութիւն, ապա ԼՂԻՄ-ը «բռնի կերպով անջատելու» ցանկացած «բռնի ընկալում է որպէս բռնարարք: Այսփորձ ընկալուած է որպէս բռնարարք: Այսպլակատի վրայ պատկերուած են Հայաստանի եւ ԼՂԻՄ-ի քարտէզները՝ ներկուած հայկական ազգային դրօշի երեք գոյներով հայկական շղթայուած է, եւ (նկ. 9): Ղարաբաղը շղթայուած է, եւ նրան՝ Հայաստանից հեռու՝ Ադրբեջանի խորքերն է քարշ տալիս խորհրդային խորհրդային, պլակատի եւ ուղեկատանկը: Իմիջիայլոց, պլակատի եւ ուղեկատանկը հայրենասիրական բնոյթի բանաստեղծուած (վերնագրուած «Եթէ հայ ես») հեղինակը 7-րդ դասարանի աշակերտ է՝ ծնունդով զարաբաղցի:

Ղարաբաղեան շարժման սկզբնաւորումից մէկ շաբաթ անց տեղի ունեցան սոււմգայիթեան իրադարձութիւնները, երբ սպանուեցին Ադրբեջանի շուրջ երեք տասնեակ, գուցէ եւ աւելի, հայազգի քաղաքացիներ: Այս կոտորածները (Բաքուի հաքացիներ: Այս կոտորածները Ղարաբաղը յուլիան 1990 թ. յունուարեան ջարդերը ներառեալ), դրանց իրականացման մեթոդները հայերի կողմից միանշանակ ընկալուեցին որպէս ցեղասպանութիւն եւ վերաբնակեցնելու պատմական յիշողութեան թափանցանք: Մեծ եղեռնի շերտը: Ղարաբաղեան շարժումը, որն իր սկզբնաւորման փուլում ուղղորդուած էր Լեռնային Ղարաբաղի հայութեան ինքնորոշման սարմանը ու այդ կերպ տարածքային պատկանելութեան հարցում պատմական

արդարութեան վերականգմանը, ստացաւ նոր խթան:

Ցուցապատառներն իրենց լեզուով էին խօսում սոււմգայիթեան ջարդերի եւ 1915 թ. ցեղասպանութեան համադրութեան մասին¹⁵: Այդ շարքի պլակատների մի մասն ունէր քարտէզային յենք: Դրանցից երկուսը մաս են կազմում մեր կողմից առանձնացուած «ցեղասպանութիւնների շարքեր» խմբի, որոնք ստեղծուած են խորհրդայինների գործառոյթ իրականացնող որոշակի տարիներին ու տեղանուների նշումով, թուարկումով ու, այդպիսով, կատարելով իւրայատուկ «բանալի բառ»-ի (keyword) դեր՝ յաճախ լիուլի բաւարար էին լինում փոխանցելու պատմական մէկ կամ մի քանի ժամանակաշրջաններին առնչուող հսկայական տեղեկատուութիւն:

Ներքոբերեալ օրինակներում քարտէզներն իրենք են կրում հիմնական իմաստային ծանրաբեռնութիւնը, մասնաւորապէս, հետեւողականօրէն իրականացուող ցեղասպանութիւնների գաղափարը ներկայացնելու համար: Այսպէս, 1988 թ. յունիսի սկզբին յայտնուած եւ Օպերային թատրոնի պատին երկար ժամանակ ամրացուած պլակատն իրենից ներկայացնում էր Անդրկովկասի քարտէզը՝ կից տարածքներով (նկ. 10): Բնութագրական է պլակատի գունային լուծումը. Հայաստանն ու Ղարաբաղը ներկուած են կարմիր գոյնով, որը արեան եւ տառապանքի

15 Մանրամասն տե՛ս H. Marutyan. Iconography of Gharabagh Movement: An Index of the Transformation of Armenian Identity.- "Armenian Forum. A Journal of Contemporary Affairs", vol. 2, n. 4, Winter 2000, p. 45-47: 8. Մարութեան, Սոյլ երթերը, ամսեղ զոհերի յիշատակի օրերը որպէս ժողովրդական հաստատիքների դրսևորման ձևեր.- «Հայ ժողովրդական մշակոյթ» հանրապետական գիտաժողովի միջոցով: XII. Հանրապետական գիտաժողովի միջոցով, Եր., 2004, էջ 98-102: Նոյն, Ցեղասպանութեան յիշողութիւնը որպէս մոթիքներ հանրապետական յիշողութիւնը որպէս մոթիքներ հանրապետական յիշողութիւնը (1980-ական թթ. վերջ-1990-ական թթ. սկիզբ).- ՊԲՀ, 2005, թիւ 1, էջ 59-63:

գոյնն է, Ադրբեջանն ու Թուրքիան՝ սեւ, որի մուսլ գոյնը պերճախօս ձեւով բացատրում է Թուրքիայի եւ Ադրբեջանի տարածքներում առկայ մէկական դեղին գոյնի գանգերով ու ոսկորներով ու դրանց ուղեկցող տարբերակներով՝ համապատասխանաբար «1915» եւ «1988»։ Ընդ որում, առաւել պարզութեան համար Ադրբեջանի քարտէզում նշուած են երկու շրջանակներ՝ մեծ եւ փոքր, որոնք, դատելով դրանց տեղադրումից, մատնանշում են մայրաքաղաք Բաքուն եւ մօտակայքում գտնուող Սումգայիթը։ Ռուսաստանն ու Վրաստանը ներկուած են չէզոք գորշ գոյնով։ Էլ աւելի չէզոք՝ սպիտակ գոյնով է ներկուած Իրանի տարածքը։ Նախիջեւանի ԻՍՄԷ-ն եւ ԼՂԻՄ-ը, չնայած ներկուած են «հայկական» կարմիր գոյնով, սակայն «բանտարկուած են», քանի որ նրանց տարածքները վանդակների մէջ են վերցուած եւ յիշեցնում են բանտային ճաղեր։

Նմանատիպ մէկ այլ, 1988 թ. աշնանային քարտէզ-պլակատում (նկ. 11) զոհերի խորհրդանիշ հանդիսացող գանգերի դերը կատարում է Թուրք-ադրբեջանական խորհրդանիշերի ուղեկցութեամբ պատկերուած սպանութիւնների իրականացման աւանդական գործիքը՝ կացինը, որից արիւն է ծորում։ Ցեղասպանութեան տարբերակներն այստեղ լրացուած են զոհերի քանակը նշող թուերով։ Թուրքիայի տարածքի վրայ գրուած է «1915» եւ «1500000», իսկ Ադրբեջանի տարածքի վրայ յայտնուած են նոր ցեղասպանութիւնների վայրերը՝ դրանց իրականացման տարբերակներով ու զոհերի քանակով՝ «Բաքու 1918 30.000», «Շուշի 1920 20.000», «Սումգայիթ 1988 ?», «Սոջալու 1988 ?»։

Այս թուարկման առաջին երկու բաղադրիչները հանդիպում են «ցեղասպանութիւնների շարքի» սկզբունքով կազմուած բազմաթիւ ցուցապատումներում։ Դրանք վերաբերում են Բաքուի հայերի կոտորածին քաղաքը Թուրքական զօրքերի

կողմից գրաւուելուց յետոյ եւ 20-րդ դարասկզբին Լեռնային Ղարաբաղի տարածքի միակ խոշոր քաղաք Շուշիի հայութեան ջարդերին։ Խոջալու յիշատակուած է սեպտեմբերի 18-20-ը Ստեփանակերտին կից համանուն ադրբեջանաբնակ գիւղաքաղաքում, բուն Ստեփանակերտում (գերակշռող հայ բնակչութեամբ) եւ Շուշիում (գերակշռող ադրբեջանական բնակչութեամբ) տեղ գտած իրադարձութիւնների կապակցութեամբ¹⁶։ Դէպքերի առիթը խոջալուցիների յարձակումն էր Ստեփանակերտ ուղեւորուող հայկական աւտոշարասեան վրայ ու դրան յաջորդող ստեփանակերտցի հայերի ընդհարումը Խոջալուի բնակիչների հետ։ Հարցական նշանը վերաբերում է այդ իրադարձութիւնների զոհերի քանակին, չնայած այդ առիթով տեղ գտած երեւանեան հանրահաւաքներին կասկածներ չէին յայտնուում տուժածների թուի վերաբերեալ։ զոհուել էր մէկ հայ, աւելի քան քառասունը ստացել էին տարբեր աստիճանի մարմնական վնասուածքներ։ Չնայած նրան, որ իրադարձութիւնները Խոջալուում համադրելի չէին սումգայիթեան ջարդերի հետ, սակայն հայերի կողմից դրանք ընկալուեցին որպէս ցեղասպանութեան քաղաքականութեան շարունակութիւն, ինչի մասին վկայում է Խոջալուի ընդգրկումը «ցեղասպանութիւնների շարքում» ոչ միայն այս ցուցապատումում, այլ նաեւ մէկ այլ տրանսպարանտում, որը յայտնուեց, ինչպէս եւ նախորդը, 1988 թ. նոյեմբերին։

«Քարտէզային» մտածողութեան կանոններով ստեղծուած մէկ այլ պլակատ 1988 թ. նոյեմբերին տանում էին «Հայ-

16 Մանրաման տե՛ս В. Б. Арутюнян. События в Нагорном Карабахе: Хроника. Часть I (февраль 1988 г. – январь 1989 г.). Ер., 1990, с. 139-141: Լ. Մելիք-Շահնազարեան, Ադրբեջանի ուղեւորական յանցագործութիւնները Լեռնային Ղարաբաղի հանրապետութեան խաղաղ բնակչութեան դէմ, Եր., 1998, էջ 48-50

գիւղնախազիծ» ինստիտուտի աշխատակիցները¹⁷։ Այստեղ պատկերուած «Armenia» («Հայաստան») մակագրութեամբ Խորհրդային Հայաստանի քարտէզի ուրուանկաբուծ երեւանի տեղում նկարուած է Ցեղասպանութեան զոհերի յուշարձանը (ընդ որում, Վերածննդի կոթողը պատկերուած է ոչ թէ աջ, ինչպէս որ իրականում է, այլ ձախ կողմում)։ Թուրքական ազգային տարազի տարրերով մի անձնաւորութիւն, որն, ամենայն հաւանականութեամբ, մարմնաւորում է Թուրք ջարդարարի կերպարը, Թուրքիայի տարածքից կուացել է եւ ձեռքերը դրել Ադրբեջանի տարածքի վրայ (մօտաւորապէս Լեռնային Ղարաբաղի սահմաններում)։ Ընդ որում, աջ ձեռքում նա բռնել է արիւնոտ յաթաղան՝ այդպիսով կարծես թէ ցանկանալով ցուցել 20-րդ դարասկզբի եւ դարավերջի ցեղասպանութիւնների միջեւ առկայ ծագումնաբանական կապը։

Ցուցապատումների մի ամբողջ շարք նուիրուած էր ցեղասպանութեան ճանաչման, աշխարհի կողմից դրա դատապարտման խնդրին։ Թէեւ, որպէս կանոն, մարդկութիւնն ընդհանուր առմամբ ներկայացուում էր անտարբեր, բայց եւ այնպէս երբեմն յայտնուում էին պլակատներ, որտեղ բնմն յայտնուում էին պլակատներ, որտեղ աշխարհը հանդէս էր գալիս իբրեւ ցեղասպանութիւնը դատապարտող, ցեղասպանութեան զոհերի վրայ սգացող։ որպէս նուրբանի կարելի է մեկնաբանել 1990 թ. այդպիսին կարելի է մեկնաբանել 75-ամապրիլի 24-ին՝ ցեղասպանութեան երկիր մեակին, Ծիծեռնակաբերդ բերուած երկիր գնդակի գլորուս յիշեցնող մարդահասակ գնդաձեւ մանրակերտը, որի մակերեսին առկայ մայրցամաքներն ու օվկիանոսները ստեղծուած էին ծաղիկներով ու կանաչ ճիւղերով, իսկ «հիւսիսային բեւեռին»

բարձրանում էր ծաղկէ խաչը։ Այս գաղափարը փոքր ձեւափոխութիւններով առկայ էր ինչպէս 15 տարի անց կերտուած Յասմիկ Մանուկեանի «Ահազանգ» պլակատում (նկ. 12) (ցուցադրուում էր 2005 թ. ապրիլեան ոգեկոչման օրերին Նկարիչների տանը կազմակերպուած ցուցահանդէսում), այնպէս էլ Նիգ-Ապարան հայրենակցական միութեան կողմից ցեղասպանութեան յուշահամալիր բերուած ծաղկակերտ գլորուսում (նկ. 13)։ Երկու դէպքում էլ խաչին փոխարինելու է եկել յուշահամալիրը՝ մի դէպքում պատկերի, երկրորդ դէպքում՝ մանրակերտի ձեւով։ Վերջին պարագայում գլորուսին ամրացուած էր «Աշխարհ, հայոց եղեռնը քո խղճի փորձութիւնն է» գրութեամբ տրանսպարանտը։ Այս տողերի ստեղծման համար, թերեւս, ներշնչանք-սկզբնաղբիւրի դեր է կատարել Ֆրանսիացի հանրայայտ գրող, 20-րդ դարասկզբի Ֆրանսիայի հայասիրական շարժման մասնակից Անատոլ Ֆրանսի «Հայերի դատը մարդկութեան դատն է» միտքը՝ արտասանուած դեռեւս 1901 թ. հրատարակային ելոյթներից մէկի ժամանակ¹⁸։ Այս ձեւակերպումը բազմիցս շրջանառուում էր Ղարաբաղեան շարժման տարիներին, այն չի կորցրել իր ազդեցիկութիւնն ու այժմեականութիւնը նաեւ մեր օրերում, ինչի մասին է վկայում թէկուզ 2005 թ. ապրիլին Գեղարուեստի ակադեմիայի ցուցասրահում ներկայացուած քարտէզային յենք ունեցող աշխատանքներից մէկը (նկ. 14)։

Ղարաբաղեան հարցի լուծման եւ հնարաւոր ցեղասպանութեան միջեւ կապ էր մատնանշում Ալ. Սպենդիարեանի արձանի պատուանդանին ամրացուած 1988 թ. յունիսեան մի պլակատ։ Այստեղ պատկերուած էր արիւնոտ եաթաղան եւ Հայաստանի քարտէզին խրուած եռաժանի։

17 Պլակատի փոքր չափերի գծանկարը սիրով վերարտադրեց եւ մեզ տրամադրեց դրա հեղինակը՝ այն տարիներին ինստիտուտի նկարիչ Սուքիաս Թորոսեանը («Տոտո»)։

18 Մանրաման տե՛ս Ե. Ա. Գասպարեան, Հայասիրական շարժումը Ֆրանսիայում Առաջին աշխարհամարտի տարիներին, Երևան, 1999

տատեսութեան լրագրողներին մեղադրում էին առաջին հերթին իրադարձութիւնների կողմնակալ լուսաբանման, ընդհանրապէս ապատեղեկատուութեան մէջ՝ պատճառներին մէկը նկատելով նրանց իրական կամ խորհրդանշական ծախուածութիւնը: Այս ընկալման դրսեւորումների շարքից է 1988 թ. հոկտեմբերեան մի պլակատ, որտեղ «ծախու գրչակ» մարմնաւորող, «Пресса» («Մամուլ») մակագրութեամբ պայուսակը ձեռքին, ուսապարկում «Правда, Известия, Время» («Պրաւդա, Իզվեստիա, ժամանակ») լրատուութեան օրգաններով անձնաւորութիւնը, դիմելով «Азербайджан» («Ադրբեջան») քարտէզով սեղանի շուրջը նստած մարդուն (այսինքն՝ Ադրբեջանի ղեկավարութեանը), առաջարկում է իր ծառայութիւնները՝ «Вам вернём слуга готов Вам служить» («Զեր խոնարհ ծառան պատրաստ է Զեզ ծառայելու»): 1988 թ. երկու այլ պլակատներում եւս անդադարձ է կատարում թղթակցի թեմային: Սրանցում խաղարկում էր դարաբաղեան իրադարձութիւնների շուրջ ոչ անաչառ, կողմնակալ յօդուածներով յայտնի «Պրաւդայի» թղթակցի Օվչարենկոյի ազգանունան «ովչարկա» ցեղատեսակի շան հետ ունեցած կապը: Այսպէս, ամառային մի պլակատում նկարուած շան վզին ամրացուած փոկի վրայ գրուած էր «Правда», շան երախը բաց էր, երեւում էին սուր ծանիքներն ու շան անունը ցուցող մակագրութիւնը՝ «Овчаренко». շունը կատաղած աչքերով նայում էր Հայաստանի ու Ղարաբաղի ուրուաքարտէզներին, ասես ցանկանում էր յարձակուել դրանց վրայ²¹: Նոյն թղթակցին նուիրուած նոյեմբերեան պլակատում նրա՝ փոքրատառով (ի նշան արհամարհանքի ու ստորացման) սկսուող ազգանունը մակագրուած էր «սեւ գործ»

21 Լուսանկարը պահպանում է Երեւանի պատմութեան թանգարանի լուսանկարների գիտաօժանդակ ֆոնդում, թիւ 3697:

անող, սեւ գոյնի ձեռքի թեւքին, որը թոյն է փչում ընդհանուր դրական երկնագոյն ֆոն ունեցող Հայաստանի ու Ղարաբաղի տարածքում բոյն դրած սպիտակ աղանու վրայ (նկ. 16): Աղանին, լինելով խաղաղութեան միջազգայնօրէն ճանաչուած խորհրդանիշ, ներկայ պարագայում, թերեւս, մարմնաւորում էր պայքարի խաղաղ ձեւը, որն ընտրել էր Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը:

Մէկ այլ քարտէզ-պլակատ ուղղակիօրէն նշում է, այն կազմողի կարծիքով, «План Москвы по разделу НКАО» («ԼՂԻՄ-ի բաժանման Մոսկուայի պլանը»): Այս պլակատն արձագանքն էր այդ օրերին շրջանառուող լուրերին, թէ Ղարաբաղի հարցի լուծման ձեւերից մէկը կարող է լինել նրա տարածքը էթնիկական սկզբունքով բաժանելը:

1988 թ. նոյեմբեր-դեկտեմբերից Ադրբեջանն ուղղակիօրէն սկսեց իրականացնել Հայաստանի՝ սկզբում մասնակի, ապա եւ ամբողջական շրջափակումը, որն, իմիջիայլոց, շարունակուած է առ այսօր: Մէկ, այն էլ աշխարհի հզօրագոյն պետութեան պայմաններում դժուար էր պատկերացնել մի վիճակ, երբ նրա սուբիեկտներին մէկը՝ առանց կենտրոնական մարմինների թոյլտուութեան, դիմէր նման քայլի: Շատ-շատերի համար պարզ էր, որ շրջափակումն իրականացուած է Կենտրոնի ոչ միայն թողութեան, այլ նաեւ անմիջական դեկավարութեան շնորհիւ: Մասնաւորապէս, տիրող մտայնութեան ցուցիչ էր 1989 թ. հոկտեմբերեան մի պլակատ (նկ. 17), որտեղ պատկերուած էր Կրեմլը (խորհրդային իշխանութեան խորհրդանիշ կարմիր աստղի փոխարէն թուրք-ադրբեջանական խորհրդանիշ կիսալուսնով ու աստղով), որն իր ձեռքերում բռնած՝ այծերի, դռների, էշերի վզներն անցկացրած թոկերով ղեկավարում է քարտէզի նոյն, հայկական գոյնով ներկուած, սակայն փշալարով շրջա-

պատուած Հայաստանի ու Ղարաբաղի շրջափակումը: Դա քիչ է, Կրեմլից հնչում է նաեւ «Вперед» («Առաջ») կարգադրութիւնը: Լաւ, իսկ ինչո՞ւ էին ադրբեջանցիները պատկերուած ընտանի կենդանիների տեսքով: Բանն այն է, որ Ղարաբաղի ներքաղաքական իրավիճակին նուիրուած միութեանական լսարանին ուղղուած հեռուստահաղորդումներից մէկի ժամանակ Ստեփանակերտի ադրբեջանցի բնակիչներին մէկը բողոքում էր, թէ հայերն իրենց անուանում են «ослы, бараны, козлы»: Այս հանգամանքն էլ կանխորոշեց ոչ այնքան խելացի համարուող, առանց մտածելու հրամանները կատարող ընտանի կենդանիների նոյնացումը շրջափակումն իրականացնողներին հետ:

1989 թ. աշնանային մէկ այլ պլակատ ուղղակիօրէն ցուցում էր՝ խորհրդային կենտրոնական իշխանութեան կողմից իրականացուող՝ Հայաստանի ու ԼՂԻՄ-ի շրջափակումը. վերջիններիս քարտէզները՝ ներկի ընդհանուր եռագոյն փոքրիկ շերտ ունեցող մի հատուածով, տեղակայուած են փշալարէ եզրերով աստղի մէջ: Նոյն օրերի մի միջոցով միմեանցից անջատուած էր իր մի թեւով միմեանցից անջատուած էր Հայաստանի ու ԼՂԻՄ-ի քարտէզները: Երկու այլ պլակատներում խորհրդային երկու այլ պլակատներում են ուղղամուտն ու մանգաղը գործում են ուղղակիօրէն, բացէիբաց. առաջին դէպքում Հայաստանի ու ԼՂԻՄ-ի քարտէզները (ծաղկապատանի ու ԼՂԻՄ-ի քարտէզները) ծաղկալից ձեւով վերնագրուած իբրեւ խորհրդարան:

Արդ, ի՞նչ ելքեր էին առաջարկուած նման իրավիճակի յաղթահարման համար: Աստիճանաբար աւելի իրատեսական էր թւում անկախութեան գործօնը: Եթէ 1988 թ. փետրուարին մարդիկ լսել անգամ չէին թուում իՍՂՄ կազմից դուրս գալու մասին, ապա իրադարձութիւնների զարգացումը, միութեանական իշխանութիւնների որդեգրած գործելակերպը քայլ առ քայլ Հայաստանի քաղաքացիներին մօտեցնում էր անկախութեան, որպէս խնդիրների հնարաւոր լուծման միջոցի, գաղափարին: 1989 թ. ամռանը բաւականին երկար ժամանակ Օպերայի հրապարակում կախուած էր «Միացեալ Հայաստանը ըստ Սեդի պայէր «Միացեալ վերտառութեամբ քարտէզ-իշխանագրի» վերտառութեամբ քարտէզ-իշխանագրում: 1920 թ. խաղաղութեան այդ պայմանագրով ստեղծուելիք հայկական պետութիւնն ունենալու էր շուրջ 160 հազ. քառ. կմ տարածք (ներկայիս 30 հազ. կմ

22 Երեւանի պատմութեան թանգարանում պահուող 1988 թ. ամառային մէկ այլ պլակատում (գիտաօժանդակ ֆոնդ, թիւ 3695) Կենտրոնի ու տա-օժանդակ ֆոնդ, թիւ 3695) Կենտրոնի ու տարբ-ադրբեջանական խորհրդանիշերով կախուած ստիճանները փողերի ծայրին դրուած ստիճաններով խոցում են Հայաստանի ու Ղարաբաղի քարտէզները, որոնցից արիւմ է կախում:

փոխարեն) եւ ելք դէպի Սեւ ծով²³: Այդ նոյն տարուայ նոյեմբերին, Ղարաբաղեան շարժումն ուղղորդող Հայոց համազգային շարժման համագումարի օրերին գործող ցուցահանդէսում, ասես արձագանքելով հոստոնների ելոյթներին, թեման ստացաւ տրամաբանական զարգացում. պլակատներէն մէկին *ԽՍՀՄ Ֆիզիկաաշխարհագրական քարտէզն էր, որից մի փոքր հեռացած Հայաստանի քարտէզը վերցուած էր կարմիր շրջանակի մէջ ու մակագրուած էր. «Ժամանակը չէ՞ արդէօք ...»* նկատի ունենալով *ԽՍՀՄ կազմից դուրս գալը* (նկ. 20): Մէկ այլ պլակատում ուղղակիօրէն ցուցուած էր, թէ ինչ ուժեր են պահում Հայաստանը *ԽՍՀՄ-ում*. հայկական ազգային (դեռեւս ոչ պետական) դրօշի եռագոյնով կապոյտ հիմնագոյնով, կարմիր ու նարնջագոյն թեւերով Հայաստանն ու Ղարաբաղը ցանկանում են դուրս թռչել *ԽՍՀՄ*

կազմից, սակայն նրանց ուժով ետ է պահում ուս մուծիկը (նկ. 21):

Այսպիսով, ինչպէս տեսանք, Ղարաբաղեան շարժման «քարտէզային մտածողութեան» դրսեւորումներում առկայ է այդ տարիների պատկերազրուցեան թեմատիկ բաւականին մեծ ընդգրկում՝ ստեղծուած ցուցապաստառների կազմման տարբեր սկզբունքների կիրառմամբ: Դրանցից ժամանակագրօրէն առաջինում տարբեր ձեւերով շօշափուում է Հայաստանի ու Ղարաբաղի, որպէս տարանջատուած մօր ու զաւակի, թեման: Քարտէզների մէկ այլ խումբ «ցեղասպանութիւնների շարքի» միջոցով ներկայացնում է Մեծ եղեռնի եւ սոլովայթեան կոտորածների նոյնութեան թեման, ցեղասպանութեան ճանաչման ու դատապարտման խնդիրը, էկոլոգիական վտանգների, որպէս ցեղասպանութիւն, դիտարկումը: Քարտէզների երրորդ խումբը փոխանցում է Ղարաբաղցիների նկատմամբ ագրեսիւնական քաղաքականութեան, նաեւ Հայաստանի եւ Ղարաբաղի պայքարի նոյնական լինելու գաղափարը: Մէկ այլ խումբ ներկայացնում է խորհրդային կենտրոնական մամուլի բացասական դերը, ինչպէս եւ դեմոկրատական արժէքների գերազասելիութիւնը: Ղարաբաղեան շարժման զարգացումներին համընթաց ձեւափոխում էր ապրում նաեւ ինքնութիւնը: Ի թիւս այլ պատկերազրուցեան նիւթերի՝ այդ գործընթացն իր դրսեւորումն է գտնում Հայաստանի շրջափակման առիթով կենտրոնի քննադատութեանն ուղղուած պլակատներում, ընդհուպ մինչեւ հակախորհրդային ուղղուածութեան քարտէզային պատկերները: Վերջապէս, քարտէզների մի շարք էլ փոխանցում է ժամանակի ընթացքում հասունացած՝ Հայաստանի անկախութեան գաղափարը:

23 Միացեալ Հայաստանի ուրուագծային քարտէզային պատկերը առկայ էր Ղարաբաղեան շարժման եւ յաջորդող տարիներին քիչ ակտիւ «քողարկուած», անուղղակի ձեւով Յեղասպանութեան յուշահամալիր տարրող ծաղկեպսակ-ցուցապաստառներում: 1988 թ. ապրիլի 24-ին Յեղասպանութեան զոհերի յուշարձանին դրուեց ծաղկեպսակ՝ «Հայ ժողովուրդի անասակների՝ Հայկական ժողովրդային շարժումից» սգոյ ժապաւեճով: Այդպիսով իր ներկայութեան մասին յայտնեց Լիբանանում գործող այդ կազմակերպութիւնը, որը յայտնի է՝ իբրեւ «Հայաստանի ազատագրութեան հայ գաղտնի բանակի» քաղաքական ուղում համակիր շարժում: Ծաղկեպսակը ձեւատրուած էր շարժման զինանշանի պատկերով, որի հիմնական առանցքը Միացեալ Հայաստանի ուրուագծային քարտէզն է՝ վրան պատկերուած Մասիսներ եւ բունցքում ձեռք՝ որպէս պայքարի խորհրդանշան: Նմանատիպ ծաղկեպսակ մեզ հանդիպեց նաեւ 1997 թ. ապրիլին: Նոյն յուշարձանին դրուած մէկ այլ ծաղկեպսակին առկայ էր «Ազատ, անկախ ու միացեալ Հայաստանի» ուրուագծային քարտէզ, որ կազմում է ՀՅԴ կուսակցութեան զինանշանի յենքը: Տե՛ս Յ. Մարութեան, «Ծաղկեպսակը որպէս ցուցապաստառ (ցեղասպանութիւնը եւ հայ ինքնութեան պատկերագրութիւնը)», «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 2001, էջ 371:

Այսպիսով, ժողովրդի պատմութեան ճգնաժամային պահերին, ի թիւս ինքնութեան զանազան խորհրդանշանների, հական, բաւականին ընդգրկուած դեր է խաղում նաեւ տեղանքների խտացուած պատկերները՝ քարտէզ-խորհրդանշանների օգտագործումը, ինչը թոյլ է տալիս դրանց օգնութեան հիւսել Ղարաբաղեան շարժման «քարտէզազրական» պատմութիւնը:

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ



Նկ. 1



Նկ. 4



Նկ. 2



Նկ. 5



Նկ. 3




Նկ. 6




Նկ. 7



Նկ. 8




Նկ. 9



Նկ. 10




Նկ. 11



Նկ. 12



Նկ. 13



Նկ. 14



Նկ. 17




Նկ. 15




Նկ. 16




Նկ. 18



Նկ. 19



Նկ. 21



Նկ. 20